ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԵՔ-ԳՀԽԱՇՁԲ-21/17-3

ք. Երևան **« 21 » ապրիլի 2021թ.**

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Է. Կիրակոսյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՀՏ-Պրոեկտ» ՍՊ և «Դրիմ Փրոջեկտ» ՍՊ ընկերությունները /Կոնսորցիումը/ երկուսը միասին (այսուհետև՝ Վաճառող) ի դեմս «ՀՏ-Պրոեկտ» ՍՊ ընկերության տնօրեն Ա.Խալաթյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, ինչպես նաև կոնսորցիումի 22.03.2021 թվականին կնքված համատեղ գործունեության պայմանագրի հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում **Արաբկիր վարչական շրջանի նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների** կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Նախագծային փաստաթղթերի կազմման ժամանակ նախագծողը՝

1) շինարարական ծրագրի կատարման համար օգտագործվող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեխնիկական բնութագրերը կազմում է օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին համապատասխան,

2) ներկայացնում է կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաների և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները,

3) ներկայացնում է աշխատանքների առանձին տեսակների կատարման օրացուցային ժամանակացույցը,

4) պատվիրատուին նախագծային փաստաթղթերը ներկայացնում է հայերեն և ռուսերեն լեզուներով՝ թղթային և էլեկտրոնային տարբերակներով:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է

արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1.Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է 1530000 (մեկ միլիոն հինգ հարյուր երեսուն հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով նախատեսված չափերով և ամիսներին/Հավելված 2/: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 30 տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի 0,19 տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.4.1 Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում նախագծողը պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում աշխատանքների կատարման ընթացքում սկզբնական նախագծի տասը տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների արժեքի քսանհինգ տոկոսին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի հանգեցրած՝ փաստացի կատարված աշխատանքների արժեքի հիսուն տոկոսին:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը,

ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Պայմանագիրը կազմված է **4** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2 և N 2.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.16 Սույն պայմանագրով Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները իրականացնում է Երևանի քաղաքի Արբկիր վարչական շրջան:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտի փող. 1
Կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900032313042
ՀՎՀՀ 02593108

Է. Կիրակոսյան _____
(ստորագրություն)
Կ.Տ.

Կատարող
«ՀՏ-Պրոեկտ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Պռոշյան 1-ին նրբ. 74տ
«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
ՀՀ 1150018566616679
ՀՎՀՀ 00229138

Ա.Խալաթյան _____
(ստորագրություն)
Կ.Տ.

Կատարող
«Դրիմ Փրոջեկտ» ՍՊԸ
Ք.Երևան, Աէրացիա2/3շ. 32բն.
«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
ՀՀ 1150008939059089
ՀՎՀՀ 02288148

Ս.Պոեցյան _____
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 1
«21» ապրիլի 2021 թ. կնքված
ԵՔ-ԳՀԽԱՇՁԲ-21/17-3 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

N	CPV	Աշխատանքի տեխնիկական բնութագիրը	Չ/Մ	ընդհանուր գինը	կատարման	
					հասցեն	ժամկետը
2	71241200/20	**Արաբկիր Վ/Շ մայթերի վերանորոգման աշխատանքների համար անհրաժեշտ է՝**	դրամ	370000	Արաբկիր վարչական շրջան	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 70-րդ օրացուցային օրը ներառյալ
		1. Վ.Վաղարշյան փող., (Ա.Սերոբի փ-ից դեպի Սոսե փող.); 2. Սոսե փող., (Վ.Վաղարշյան փ-ից դեպի Սոսե 1-ին նրբ.); 3. Հյուսիսային ճառագայթի աջ թև; 4. Արղության փող., (Արղության նրբ-ից դեպի 38 շենք); 5. Վ.Համբարձումյան փող., (Վ.Փափազյան փող-ից դեպի Վ.Վաղարշյան փող.); 6. Գ.Սունդուկյան փող., (Վ.Վաղարշյան փող-ից դեպի Գ.Գյուլբենկյան փող-ի հատված); 7. Ա.Խաչատրյան փող., 1-ին նրբ., (Կոմիտասի պող-ից դեպի Ա.Խաչատրյան փող. հատված) գործող շինարարական նորմերի պահանջների համաձայն կազմել **նախագծանախահաշվային** փաստաթղթերը: Համաձայն Երևանի ավագանու առ 16.03.2012թ N 405-Ն որոշման նախագծում ներկայացնել շինհրապարակի ժամանակավոր առանձնացման և տեղեկատվական վահանակների տեղադրման կետերը:				
		Տեխնիկական առաջադրանք				
		1. Ներկայացնել տեղազննման ընթացքում հայտնաբերված բոլոր տիպի լրացումների և փոփոխությունների առաջարկություններ: Կազմել թերությունների ակտ, (տեխնիկական եզրակացություն) որում սպառիչ ներկայացնել մայթերի առկա վիճակը (կցել նաև լուսանկարներ) և նախատեսվող աշխատանքների ծավալները ու տեսակները՝				
		ա/ Եզրաքարերի մաշվածության և անորակ նյութերի առկայությունը և հատված առ հատված փոխարինման անհրաժեշտությունը (ներկայացնել լուսանկարներ):				
		բ/ Ասֆալտե/բետոնե/տոմետներով ծածկված ծածկի մաշվածության աստիճանի գնահատում և վերանորոգման ծավալները:				
		գ/ Մայթը ապօրինի զավթաց և հետիոտնների շարժին խոչընդոտներ ստեղծող փոքր ճարտարապետական ձևերի և կառույցների (տաղավարների, ցանցերի) առկայությունը:				
		դ/ Վնասված և մաշված ոռոգման խողովակների ծավալը և ապամոնտաժման ծախսերը:				
		ե/ շինաղբի ծավալները և 12 կմ հեռավորության վրա տեղափոխումը:				

		2. Տեխնիկական եզրակացության հիման վրա կազմել էսկիզ և ներկայացնել քննարկման և հաստատման և առաջադրանքի համաձայն կազմել մայթերի և թեքահարթակների կառուցման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերը, ներառելով՝				
		Թերությունների ակտով հաստատված բազալտե եզրաքարերի քանդում ձեռքով /համապատասխան գործիքների օգտագործմամբ/				
		Բազալտե 15x30 սմ եզրաքարերի տեղադրում B 15 դասի բետոնե հիմքի վրա:				
		Մայթին ապօրինի կատուցված և հետիոտնի շարժին խոչընդոտող փոքր ճարտարապետական ձևերի ապամոնտաժում /առկայության դեպքում/				
		Թերությունների ակտով նախատեսված գոյություն ունեցող մայթի ա/բ ծածկի, խճի հիմքի և գրունտի քանդում ձեռքով /կամ մեխանիզմով/				
		Խճային նախապատրաստական շերտի և բետոնե հիմքի իրականացում				
		խաչմերուկներում և մայթի երթևեկելի մասի հետ հատման որոշ բանուկ հատվածներում պետք է կառուցվեն թեքահարթակներ:				
		- լայնությունը նախատեսել 2մ կամ ըստ անհրաժեշտության, թեքությունը 8-10%				
		- երեսպատել թեքահարթակները 3 սմ հաստությամբ ոչ ծակոտկեն բազալտե սալիկներով				
		Ոռոգման խողովակների համակարգի մոնտաժում՝ առաջնությունը տալ պլաստմասե խողովակներին իսկ կոշտ ծածկույթի տակ պողպատե խողովակների;				
		Սիզամարգերի համար անհրաժեշտ սևահողի ծավալների մատակարարումը նախատեսել մինչև 35 կմ հեռավորություն ունեցող վայրից:				
		3. Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների ավարտից հետո նախագծերը համաձայնեցնել Պատվիրատուի հետ ներկայացնելով օգտագործվող նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները:				
		4. Նախագծա-նախահաշվային փաստաթղթերը ներկայացնել 7 օրինակից:				
		5. Նախագծա-նախահաշվային փաստաթղթերը ներկայացնել նաև ռուսերեն տարբերակով:				
		6. Նախագծերը և նախահաշվարկները ներկայացնել նաև էլեկտրոնային կրիչով կամ ուղարկել պայմանագրում նշված էլեկտրոնային հասցեին՝ նախագիծը .pdf իսկ նախահաշիվը .xls (excel) ձևաչափերով:				
		7. Աշխատանքների դիմաց վճարումը կատարվելու է փորձաքննության եզրակացություն տրամադրվելուց հետո:				
6	71241200/23	**Արաբկիր վարչական շրջանի մայթերի թեքահարթակների կառուցման աշխատանքների համար առաջատրվում է** կազմել **տիպային էսքիզ** և միավորի կառուցման **նախահաշիվ-ծավալաթերթ**	դրամ	60000	Արաբկիր վարչական շրջան	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 45-րդ օրացուցային օրը ներառյալ
		1. Նախատեսել				
		ա/ գոյություն ունեցող բազալտե եզրաքարերի քանդում ձեռքով/համապատասխան գործիքների օգտագործմամբ/				
		բ/ գոյություն ունեցող ա/բ ծածկի, խճի հիմքի և գրունտի քանդում ձեռքով				
		գ/ բազալտե 8x20 սմ եզրաքարերի տեղադրում B 15 դասի բետոնե հիմքի վրա				
		դ/ խճային նախապատրաստական շերտի և բետոնե հինքի իրականացում				
		ե/ 3 սմ հաստությամբ ոչ ծակոտկեն բազալտե սալիկներով երեսապատում				
		զ/ լայնությունը նախատեսել 2մ, թեքությունը 8-10%				

		է/ Նախահաշիվ-ծավալաթերթը կազմել ՀՀ ում գործող շինարարական նորմերի ն և պահանջներին համաձայն:				
		ը/ Շին. աղբի տեղափոխում 12 կմ հեռավորության վրա:				
		2. Տեխնիկական եզրակացության արդյունքներին համաձայն ներկայացնել				
		ա/ Թեքահարթակների կառուցման աշխատանքների տիպային էսքիզ-նախագիծ՝ որը անհրաժեշտ է ներկայացնել նախնական համաձայնության:				
		բ/ Առաջադրանքի համաձայն կազմել թեքահարթակների կառուցման աշխատանքների նախագծա-նախահաշվային աշխատանքների փաստաթղթեր:				
		3.Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների ավարտից հետո նախագծերը համաձայնեցնել Պատվիրատուի հետ:				
		4. Նախագծերը և նախահաշվարկները ներկայացնել նաև էլեկտրոնային կրիչով կամ ուղարկել պայմանագրում նշված էլեկտրոնային հասցեին՝ նախագիծը .pdf իսկ նախահաշիվը .xls (excel) ձևաչափերով:				
		5. Նախագծա-նախահաշվային փաստաթղթերը ներկայացնել նաև ռուսերեն տարբերակով				
		6. Նախագծա-նախահաշվային փաստաթղթերը ներկայացնել 7 օրինակից				
		7. Աշխատանքների դիմաց վճարումը կատարվելու է փորձաքննության եզրակացություն տրամադրվելուց հետո:				
7	71241200/165	**Արաբկիր Վ/Շ տարածքում գտնվող հենապատերի վերանորոգման աշխատանքների համար անհրաժեշտ է՝**	դրամ	1100000	Արաբկիր վարչական շրջան	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 70-րդ օրացուցային օրը ներառյալ
		1. Բաբայան փող. 26-34 հասցեների բակային տարածքում գտնվող հենապատ 2. Դավիթաշենի կամրջի հենապատ Ընդհանուր առմամբ 1200 քմ: կազմել **նախագծանախահաշիվ** գործող նորմերի պահանջների համաձայն:				
		Տեխնիկական առաջադրանք				
		1. Ներկայացնել տեղազննման ընթացքում հայտնաբերված բոլոր տիպի լրացումների և փոփոխությունների առաջարկություններ կցելով համապատասխան լուսանկարներ: Կազմել թերությունների ակտ, (տեխնիկական եզրակացություն) որում սպառիչ ներկայացնել հենապատերի առկա վիճակը և նախատեսվող աշխատանքների ծավալները ու տեսակները, մասնավորապես՝				
		ա/ Հենապատերի վնասված ու մաշված հատվածները և մակերեսը, անորակ նյութերի առկայությունը և հատված առ հատված վերանորոգման անհրաժեշտությունը:				
		բ/ գրունտային ջրերի հեռացման համակարգի առկայությունը և դրա պիտանելությունը շահագործման: Անհրաժեշտության դեպքում նախագիծ-նախահաշում նախատեսել դրենաժային համակարգի մոնտաժում:				
		գ/ Հենապատերի վրա և անմիջապես կից աճած խոտաբույսերի մաքրում և ծառերի կտրում:				
		դ/ Նախատեսել հենապատերի բարձրացում: Ներկայացնել առաջարկություններ և նախագիծ: Հենապատի վերևում նախատեսել բազրիքներ՝ նոր կառուցվող և գոյություն ունեցող հենապատերի վրա:				
		դ/ Նախահաշիվ-ծավալաթերթում նախատեսել շինաղբի տեղափոխում 12 կմ հեռավորության վրա և (անհրաժեշտության դեպքում) սևահողի մատակարարում 35 կմ հեռավության վրա գտնվող վայրից:				
		2. Անհրաժեշտ է իրականացնել հետևյալ աշխատանքները՝				
		ա/ քայքայված սվաղի քանդում,				

		բ/ քանդված շին.աղբի հավաքում, բարձում ա/մ և տեղափոխում,				
		գ/ մետաղական ցանցի տեղադրում,				
		դ/ նոր ց/ա բարձրորակ սվաղի իրականացում,				
		ե/ գրունտային ջրերի հեռացման համար համապատասխան խողովակների տեղադրում				
		զ/ պատրաստել հենապատերի բարձրացման համար համապատասխան նախագծեր:				
		է/ հարող խոտածածկույթի մաքրում և ծառերի կտրում (համաձայնեցնելով կանաչապատման ՀՈԱԿ-ի հետ)				
		Անհրաժեշտության դեպքում ոռոգման խողովակների համակարգի մոնտաժում՝ առաջնությունը տալ պլաստմասե խողովակներին իսկ կոշտ ծածկույթի տակ պողպատե խողովակների;				
		3. Նախահաշիվ-ծավալաթերթը կազմման ընթացքում քննարկել իսկ աշխատանքների ավարտից հետո համաձայնեցնել Պատվիրատուի հետ ներկայացնելով օգտագործվող նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները:				
		4. Նախահաշիվ-ծավալաթերթը ներկայացնել 7 օրինակից:				
		5. Նախահաշիվ-ծավալաթերթը ներկայացնել նաև ռուսերեն տարբերակով:				
		6. Նախահաշիվ-ծավալաթերթը ներկայացնել նաև էլեկտրոնային կրիչով կամ ուղարկել պայմանագրում նշված էլեկտրոնային հասցեին՝ .xls (excel) ձևաչափերով:				
		7. Աշխատանքների դիմաց վճարումը կատարվելու է փորձաքննության եզրակացություն տրամադրվելուց հետո:				
		7. Աշխատանքների դիմաց վճարումը կատարվելու է փորձաքննության եզրակացություն տրամադրվելուց հետո:				

Նստարանների և աղբամանների նախագծերը կից պայմանագրին:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտի փող. 1
Կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900032313042
ՀՎՀՀ 02593108

Է. Կիրակոսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Կ ա տ ա ր ո ղ
«ՀՏ-Պրոեկտ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Պռոշյան 1-ին նրբ. 74տ
«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
ՀՀ 1150018566616679
ՀՎՀՀ 00229138

Ա.Խալաթյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Կ ա տ ա ր ո ղ
«Դրիմ Փրոջեկտ» ՍՊԸ
Ք.Երևան, Աէրացիա2/3շ. 32բն.
«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
ՀՀ 1150008939059089
ՀՎՀՀ 02288148

Ս.Կոջոյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
«21» ապրիլ 2021 թ. կնքված
ԵՔ-ԳՀԽԱՇՁԲ-21/17-3 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Հ/Հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Աշխատանքներ												
			դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում*												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
2-6-7	71241200	*Արաբկիր վարչական շրջանի նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքներ*	...	...	...	765000	765000	765000	1147500	1147500	1147500	1530000	1530000	1530000	1530000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտի փող. 1
Կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900032313042
ՀՎՀՀ 02593108

Է. Կիրակոսյան ----------
(ստորագրություն)
Կ.Տ.

Կատարող
«ՀՏ-Պրոեկտ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Պռոշյան 1-ին նրբ. 74տ
«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
ՀՀ 1150018566616679
ՀՎՀՀ 00229138

Ա.Խաչատրյան ----------
(ստորագրություն)
Կ.Տ.

Կատարող
«Դրիմ Փրոջեկտ» ՍՊԸ
Ք. Երևան, Աբովյան 2/3շ. 32բն.
«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
ՀՀ 1150008939059089
ՀՎՀՀ02288148

Ս.Կոռեջյան ----------
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 5
« » ապրիլի 2021 թ. կնքված
ԵՔ-ԳՀԽԱՇՁԲ-21/17-2 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » ապրիլի 2021 թ. կնքված
ԵՔ-ԳՀԽԱՇՁԲ-21/17-2 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը
Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը
պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

ՀԱՏՈՒՑԱԿԱՆ ԾԱՆՈՒՑԱԳԻՐ № 15

21 ապրիլի 2021թ.

Նստարան

ՀՀ-ՊՐՈԵԿՏ ՍՊԸ 00229138 ՀՏ-Պրոեկտ ՍՊԸ

Հիմնադրման ամսաթիվ

«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ ք. Ք. Երևան

Նստարան

Հաշվարկային հաշիվ N

Դեբետ հաշիվ N	Գումար
1150018566616679	229 500,00 AMD

ԲԻԿ	
Հաշիվ N	

Հիմնադրամի անվանումը

Էմիսիոն եկամուտ քաղաքացիներից ստացված միջոցներ 00 լուսա

Գումարը տառերով

Էմիսիոն ապահովագրության ծածկագիր N ԵՔ-ԳՀԽԱՇՁԲ-21/17

Հիմնադրման նպատակը, ապրանքի, աշխատանքների, ծառայությունների անվանումը, ապրանքային փաստաթղթերի NN և գումարները

Հանձնարարական տրամադրվում է

Հանձնարարական տրամադրվում է

Բանկի ստորագրություն

Ստորագրություն

Ստորագրություն